

իակ երկրորդը 1914 ին. քիչ ժամանակ վերջը կը վախճանի ու կը թաղուի Սիրիի գերեզմանատունը:

Իր գլխաւոր երկասիրութիւնն է Զեյթունի անցեալին ու ներկային կոչուած գիրքը, զոր տպագրել տուած է Վենետիկ (Բ. մասը, Փարիզ, 1903) իր ուղեւորութեան միջոցին ջանացած է փափաքողներուն վաճառել իր գիրքերը. 1912 ին հրատարակած է նաև Զմիւռնիոյ մէջ Ռոյեւորական նօթեր անուամբ տետրակ մը՝ ուր կը նկարագրէ իր ճամբորդութիւնները և կը յիշէ շնորհակալութեամբ այն անձերը որ հիւրընկալած են զինքը ու օգնած են իր հրատարակութիւններուն:

ՄՈՎԱՍԷՍ ԵՊՄ. ԿԷՕՐՐԻԻԿՃԵԱՆ. ՊՈՂՍԵՅԻ.—Մը. Ծ. 1840 ին. Զո. 1868 ին. ՏՊ. (1870-71). Ա.Ո. Կիպրոսի (1872-1874). Թարգման 1876 ին. կը հրատարի Միաբանութենէն 1876 ին. Ա.Ո. Հալէպի և ապա Շապին-Պարահիսարի 1880 ին. Ա.Ո. Պիլէճիկի. կը ձեռնադրուի եպոս. 1899 ին. Պատուիրակ Կիլիկիոյ կթղս. ի ընտրութեան 1902 ին. նոյն տարին հրաւիրակ Սահակ Կթղ. ի Երուսաղէմի մէջ. որոշմամբ Սառն ժողովի Ա.Ո. Պաղատի. կը վախճանի Պոլիս 1915 ին:

ՄՈՎԱՍԷՍ ԿԹՂ. ՏՍԹԵԻԱՑԻ. (Բաղաց գաւառէն, Սիւնիք, խոտանան գիւղէն). — Ծ. 1577 ին. աշկ. Եգեսիացի Սրապիոն վարդապետի, յետոյ Գրիգոր Պարք. Կեսարացիին. 15 տարեկան հասակին մէջ արեղայ կը ձեռնագրուի վերջնոյս հրամանով. 1616 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Սինայի կողմերը եւ Ս. Յակոբի վանքը: Գրիգոր պարք. Պարոնտէր լուսարար կը կարգէ զայն Ս. Յարութեան տաճարին, և յետոյ յիշեալ պատարիարքէն նուիրակութեան պաշտօն կ'ստանայ և զայն կատարելէ վերջ կը դառնայ Երուսաղէմ և իր հաշիւները կը մատուցանէ պարք.ին. (Դարչիժեցի, 284-286 նաև Սարգսն, էջ 674-76): Երուսաղէմէն կը մեկնի Արեւելեան կողմերը եւ կը պարապի քարոզութեան ու կը հաստատէ վանքեր: Շահաբաս կը շնորհէ անոր Էջմիածնի լուսարարութեան պաշտօնը և յատուկ հրովարտակ մը որով 1626 ին կարող կ'ըլլայ ան նորոգելու թէ Ս. Էջմիածինը և թէ բոլոր վանքերը: Շահաբաս այս շնորհը կ'ընէ Մովսէս վրդ.ին՝ սա պատճառաւ որ անիկա Երուսաղէմի Ս. Յակոբի վանքի միաբաններէն մով ներմկցնէրու արհեստը սովորած